ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների գնահատման հարցաթերթ

2021/2022 1 կիսամյակ

1. Ընդհանուր տեղեկություններ	
1.1	Նշեք Ձեր սեռը
1.2	Պատրաստվու՞մ եք շարունակելու Ձեր ուսումը
1.3	Ձեր ուսումնառության միջին որակական գնահատականը (ՄՈԳ)
1.4	Հայտնի՞ է արդյոք՝ որտեղ եք աշխատելու
1.5	Այժմ Դուք աշխատո՞ւմ եք
2. Ձեր բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից	
2.1	Ուսումնառությունը ԵՊՀ-ում որքանո՞վ է նպաստում մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը
2.2	Ինչպե՞ս եք գնահատում ուսումնառությունը ԵՊՀ-ում տեսական գիտելիքներ տալու առումով
2.3	Ինչպե՞ս եք գնահատում ուսումնառությունը ԵՊՀ-ում գործնական հմտություններ տալու առումով
2.4	Ինչպե՞ս եք գնահատում ուսումնառությունը ԵՊՀ-ում օտար լեզուների իմացության ապահովման առումով
2.5	Որքանո՞վ էին ընդհանուր առմամբ օգտակար մատուցվող դասընթացները
2.6	Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը
2.7	Ձեր գիտելիքները որքանո՞վ են օբյեկտիվ գնահատվել
2.8	Ինչպե՞ս եք գնահատում ամփոփիչ ատեստավորման (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություն) օբյեկտիվությունը
2.9	Որքանո՞վ եք բավարարված ավարտական աշխատանքի գիտական ղեկավարի աշխատանքից (բակ.)
2.9	Որքանո՞վ եք բավարարված մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքից (մագ.)
2.10	Ավարտական աշխատանքի գիտական ղեկավարը որքա՞ն ժամանակ է հատկացրել Ձեզ այն պատրաստելիս (բակ.)
2.10	Մագիստրոսական թեզի գիտական ղեկավարը որքա՞ն ժամանակ է հատկացրել Ձեզ այն պատրաստելիս (մագ.)
3. Ձեր բավարարվածությունը ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից	
3.1	Որքանո՞վ եք բավարարված լսարանների վիճակից և կահավորանքից
3.2	Որքանո՞վ եք բավարարված համակարգչային սրահների մատչելիությունից և կահավորանքից
3.3	Որքանո՞վ եք բավարարված ԵՊՀ համացանցի (ինտերնետի) մատչելիությունից
3.4	Որքանո՞վ եք բավարարված ԵՊՀ կարիերայի կենտրոնի աշխատանքի արդյունավետությունից
3.5	Որքանո՞վ եք բավարարված ուսումնական լաբորատորիաների սարքավորումներով հագեցվածության աստիճանից և կահավորանքից (հարցին պատասխանում են միայն ֆիզմաթ և բնագիտական մասնագիտությունների շրջանավարտները)
3.6	Որքանո՞վ եք բավարարված գրադարանում և ընթերցասրահներում տրամադրած ժամանակակից մասնագիտական գրականությունից
3.7	Որքանո՞վ եք բավարարված գրադարանի ընթերցասրահների վիճակից և կահավորանքից
3.8	Որքանո՞վ եք բավարարված գրադարանի և ընթերցասրահների աշխատաժամերից և սպասարկումից
4. Ձեր բավարարվածությունը համալսարանական միջավայրից	
4.1	Որքանո՞վ եք գոհ ԵՊՀ ղեկավարությունից
4.2	Որքանո՞վ եք գոհ ֆակուլտետի ղեկավարությունից
4.3	Որքանո՞վ եք գոհ պրոֆեսորադասախոսական կազմից
4.4	Որքանո՞վ եք գոհ ուսանողական կառույցներից (Ուսանողական խորհուրդ, Ուսանողական գիտական ընկերություն)
4.5	Որքա՞ն արդյունավետ են գործում ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերը և մեխանիզմները

5. Ձեր կարծիքը կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ	
5.1	Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)
5.2	Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով

6. Ձեր ընդհանուր գնահատականը ԵՊՀ-ում ստացած կրթությունից	
6.1	Ընդհանուր առմամբ ինչպե՞ս եք գնահատում ԵՊՀ-ում ստացած Ձեր կրթությունը
6.2	Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ